ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/12 ծածկագրով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման, ամրակայման աշխատանքներ) որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 27.12.2021թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Սեյսմշին» ՍՊԸ	marketing@seismshin.am
2	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	gritig@inbox.ru
3	«Բագարանի Բարիք» ՓԲԸ	bagaranibariq@mail.ru
4	«ԿՈՓ» ՍՊԸ	kop_ooo@mail.ru
5	«Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ	koshtoyansamvel@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները									
		«Սեյսմշին» ՍՊԸ		«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ		«ԿՈՓ» ՍՊԸ		«Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ		«Բագարանի Բարիք» ՓԲԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ									
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	1179690	400000	480000	1500000	1500000*	1800000	1800000*	830000	996000	17000000	17000000*

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

6. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

6.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ քան 2022թ հունվարի 7-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 07.01.2022թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

7.1 **«Սեյսմշին» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ բացակայում է «Կից ներկայացվում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և Մասնակցի կողմից կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը՝ համաձայն սույն հրավերի I-ին մասի 2.4 կետի» նշումը:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում մասնագետի որակավորումը և կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին, լրացված չէ վերջինիս 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը, բացակայում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվող ծառայություններում վերջինիս ներգրավվելու մասին:
-Հայտով ներկայացված նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացված տվյալ պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերում (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) բացակայում են պայմանագրերի կատարումն ընդունած կողմի ստորագրությունները, բացակայում է նաև պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունների սահմանված ժամկետում կատարումը հավաստող փաստաթղթերը:

7.2 **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվող ծառայություններում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետի անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

7.3 **«ԿՈՓ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.
- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը անհրաժեշտ է փոխարինել «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի» բառերով:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում մասնագետի որակավորումը և կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին:

7.4 **«Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում մասնագետի որակավորումը և կատարած աշխատանքի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին, լրացված չէ վերջինիս 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը, բացակայում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվող ծառայություններում վերջինիս ներգրավվելու մասին:
- Հայտով ներկայացված չէ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

7.5 **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ բացակայում է «Կից ներկայացվում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և Մասնակցի կողմից կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը՝ համաձայն սույն հրավերի I-ին մասի 2.4 կետի» նշումը և հրավերի I-ին մասի 2.4 կետով պահանջվող համապատասխան փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Սեյսմշին» ՍՊԸ-ին, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին, «ԿՈՓ» ՍՊԸ-ին, «Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ-ին** և **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.1-ից 7.5 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2022թ հունվարի 11-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 11.01.2022թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Սեյսմշին» ՍՊԸ-ն, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն, «ԿՈՓ» ՍՊԸ-ն, «Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ-ն և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն** սահմանված ժամկետում շտկել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

9.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և ընթացակարգի մասնակիցներին հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ բանակցությունների ս.թ հունվարի 14-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 14.01.2022թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Վերգինե Սահակյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սենիկ Մարգարյան

Բացակայում են՝

«Սեյսմշին» ՍՊԸ-ի, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի, «ԿՈՓ» ՍՊԸ-ի, «Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

10. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

10.1 Սեյսմշին» ՍՊԸ-ի, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի, «ԿՈՓ» ՍՊԸ-ի, «Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների բացակայության պատճառով, վերջիններիս հայտով ներկայացված գնային առաջարկները թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.2 Նիստին ներկա մասնակցի հայտով առաջարկված գնի նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություններ՝ սահմանելով 5 րոպե տևողությամբ ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.3 Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետի ավարտին «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (հիմք՝ Հավելված 1):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

11.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից՝

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սեսմշին» ՍՊԸ-ին (ընտրված մասնակից),

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սերպանտին Ինժեներինգ» ՍՊԸ-ին,

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 10.1 կետը՝ մերժել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի և «ԿՈՓ» ՍՊԸ-ի հայտերը՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

12. Գնահատման արդյունքների մասին.

12.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Հովսեփյան /նախագահ/

_____ Լուսինե Իգիթյան

_____ Խորեն Մնացականյան

_____ Արմինե Ստեփանյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/

Հավելված 1

ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-22/12 ծածկագրով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման, ամրակայման աշխատանքներ) որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

Բանակցությունների արդյունքում առաջարկված գները

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Նախահաշվային գինը	«Բագարանի Բարիք» ՓԲԸ	
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Տեխնիկական հսկողության ծառայություններ	1179690	17000000	17000000*
Բանակցությունների ընթացքում առաջարկված գները			1170000	1170000
Բանակցությունների ավարտին առաջարկված գները			1170000	1170000

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սենիկ Մարգարյան

14.01.2022թ